№ 92 Յունիսի 4 (16) 1880 Յունիսի 4 (16) № 92

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և ազգ տօներից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մտաւոր կեանքը չը կայ։—Ներքին տեսութիւն։ Դամակ Ախալցխայից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Հայերը, քիւրդերը և Թիւրքերը։—Զմշակիչ հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական խնդիր։

ՄՏԱՒՈՐ ԿԵԱՆՔ ՉԸ ԿԱՅ

Լսեմ համեմատենք Կ. Պոլսի հայերին կովկասեան հայերիս հետ, կը համոզվենք, որ Կ. Պոլսի հայերը մի առաւելութիւն ունեն մեզ վրա, այն է որ նրանք վազուց է արդէն սովոր են կենդանի խօսքին, իսկ մենք դեռ ևս այդպիսի պահանջ չենք զգում։

Նրանց մօտ կենդանի խօսքը լսելու պահանջը զարգացել է մասամբ իրանց հոգևորականների քարոզների միջոցով, մասամբ էլ լսարանների միջոցով, որոնք հիմնվել են և շարունակվում են աշխարհական երիտասարդների ջանքերով։

Մեզ մօտ այդ չը կայ։ Մեզ մօտ, հարիւր զարգանալ է սկսում ընթերցանութեան պահանջը. տպագրական խօսքը մեզանում աւելի ծաղկած դրութեան մէջ է, քան թէ կենդանի խօսքով գաղափարի աւանդելը։

Մեր դպրոցներն անգամ չեն զարթեցնում այդ մտաւոր պահանջը մեր ամբոխի մէջ։

Ընդեալ տարիներում, երբ սկսվեցան մեզ մօտ հայերէն լեզուով հրապարակական դասախօսութիւններ, բազմաթիւ հասարակութիւն էր գալիս լսելու այդ դասախօսութիւնները։ Հայը, մանաւանդ Թիֆլիսեցին, սիրում է միայն նորութիւններ, բայց դէնց որ մի բան հնանում է, հայի, մանաւանդ Թիֆլիսեցու ուղեղը յոգնում է, նա երկար ժամանակ չէ կարող կենտրոնացնել իր մտաւոր ոյժը մի բանի վրա....

Մտաւոր կեանքին, մտաւոր գործունէութեան անսովոր ուղեղը պէտք է վարժեցնել մտածելու, պէտք է սովորեցնում մտաւորապէս ապրելու։

Լսեմ այդ անհնարին է անել բնական ճանապարհով, անհրաժեշտ է այդ գլուխ բերել արուեստական միջոցներով։

Դեռ երկու սերունդ պրանից առաջ ռուսաց կառավարութիւնը փող էր վճարում տեղացի ծնողներին, որպէս զի նրանք ուղարկեն գիմնազիա իրանց զաւակներին։ Այժմ իրանք ծնողներն են վճարում իրանց մանուկների ուսման համար և ուսում առնելու ցանկացող երեխաները աւելի շատ են, քան կարող են իրանց մէջ աշակերտներ պարունակել մեր մի քանի պետական դպրոցները։

Այդպէս էլ պէտք է սկսել լսարանների, հրապարակական դասախօսութիւնների, կիրակնօրեայ դպրոցների վերաբերութեամբ։ Մենք չենք ասում որ փող պէտք է վճարել լսողներին, բայց պէտք է ձրիապէս դասաւորութիւն անել, կամ շատ էժան մուտք նշանակել։ Այդպիսով միայն կարելի կը լինի յաղթել մեր հասարակութեան մէջ դէպի մտաւոր կեանքը տիրող անտարբերութիւնը։

Ի հարկէ, սկզբից լսողներ քիչ կը լինեն, բայց այնուամենայնիւ կը կազմվի լսողների մի հաստատ խումբ, մի կորիզ, որ հետզհետէ թւով կաճի։

Բայց բարեգործական նպատակով դասախօսութիւններ կարդալուց, երևում է, պէտք է ձեռք վերցնել, որովհետև ծիծաղելի է կարդալ դասախօսութիւն մի վաթսուն մարդու առջև և վերջը հաշիւ տալել, թէ այս ինչ դասախօսութիւնից դոյացաւ յոգնած սովատանջների եօթանասուն ռուբլի զուտ արդիւնք, այն էլ մի քաղաքի մէջ, որ պարունակում է իր մէջ քառասուն հազար հայ բնակիչ։ Որտեղն քառասուն հազար հայերից միայն յիսուն, վաթսուն մարդ է գտնվում, որոնք պատրաստ են լսել մի հրապարակախօսութիւն, իսկ մնացածներին պէտք է հրաւիրել ձրիապէս, կամ խնդրել, աղաչել, որ բարեհաճեն տոմսակ վեր առնել, սաղացնել տոմսակները և այն....

Երբ հայը լսում է թէ դասախօսութիւն է լինում յոգնած սովատանջների, նա նոյն ինքն դասախօսութիւնը երկրորդական բան է համարում և ասում է. «արդէն բաւական տուել եմ յոգնած սովատանջներին։» Բայց նա չէ դնում դասախօսութիւն, նոյն իսկ դասախօսութիւնը լսելու համար։

Պէտք է փոքր առ փոքր սովորեցնել մեր ժողովուրդը գնալ դասախօսութիւնը լսելու նոյն իսկ դասախօսութեան համար։

Գ. Ա.

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

Սենեակի լուսամուտներից, ուր նստած էր Վարդանը, չրջապատած իր հիրնկալի ուրախ ընտանիքով, երևում էր կանաչազարդ հովիտը, որ վերջանում էր գեղեցիկ լեռներով։ Լեռները պատած էին խիտ անտառներով, և հակայ ծառերի ծայրերը միախառնվելով երկնքի պարզ կապուտակութեան հետ, ստեղծում էին մի զարնելի պատկեր։ Վաղորդեան արեգակը թափել էր այնտեղ իր ոսկեղէն ճառագայթները, և նրա լուսով, արծաթէ օձերի նման, պտտյվելով և չոլոշվելով, վազում էին զանազան գետեր, և ձեղքելով անց էին կենում հովիտի հարթութեան միջից։ Վարդանը չէր կարողանում աչքերը հեռացնել այդ հրաշալի տեսարանից։ Վարդեի և անմեղ բնութիւնը մարդու աչքատեսէր ձեռքի տակ այնպիսի գեղեցիկ կերպարանք էր ստացել, որպէս կրտաւի կտոր պատկերահանի հրաչակերտ վրձինի տակ։

—«Դուք խօսում էիք քրդերի և Թուրքերի մասիր ժամանակներից, չարունակեց ասանդրը մի առանձին ուրախութեամբ,—բայց այն ժամանակներից յետոյ չատ բաներ փոխվեցան։ Ցեմնում էք այդ գաղանների լեռները, մի և կէս դար առաջ դրանք բոլորովին մերկ էին, մի փոքրիկ թուփ անգամ չը կար այդ սարերի վրա։ Այն ժամանակ բարբարոսի ձեռքը, որպէս անգիրարար կոտորում էր մարդերին, այնպէս էլ անխնայ կոտորում էր ծառերին։ Բոլորը սպանված էր. ժողովուրդը փառվքի համար գործ էր անում աթարը, իսկ չինովնիկի համար փայտ չը կար. այդ պատճառով սպանված էին բնակվել գեսնափոր խորշերի մէջ։ Բայց երբ տիրեցին խաղաղութեան ժամանակները, այնուհետև աւերակ գիւղերը լցվեցան բնակիչների բազմութեամբ, իսկ մեր լեռները ծածկվեցան անտառներով։ Այդ բոլորը տեսվել է գիւղացիների աչխատասէր ձեռքով։ Ցեմնում էք այդ կանաչազարդ հովիտը, առաջ նա մի ցամաք և անջուր անապատ էր, մի փոքրիկ գետ միայն ունէր, որը բոլորովին ցամաքում էր ամառնային տօթերից։ Իսկ այն օրից, երբ անտառները ածին, մեր հովիտը ստացաւ ջրի առատութիւն։ Այժմ նա մեր գաւառի պտղաբեր և ամենաարգաւանդ երկրներից մէկն է։ Այո, չատ բաներ փոխվեցան.... Առաջ այստեղ ճանապարհներ անգամ չը կային, իսկ այժմ ամէն տեղ կը տեսնէք հայելու նման հարթ ճանապարհներ, որ միացնում են մեր երկրի բոլոր քաղաքները. և այդ ճանապարհների վրա սլանում են կառքեր, որ տարվում են ոչ թէ անասունների ուժով, այլ շոգու զօրութեամբ։ Մեր երկրի արդիւնաբերութիւնները մենք վաճառանում ենք հաղարաւոր մղոններ հեռու և փոխարէնը ստանում ենք՝ ինչ որ մեզ պէտք է։

Վարդանը զարմացած լսում էր այդ բոլորը, բայց երբ նրա աչքը ընկաւ գեղեցիկ Լալայի երեսին, յայտնի չէ թէ ինչու նրա խելքին եկաւ հարցնել, թէ ո՞ւտեղ է սովորել օրիորդը։

—«Մի չաքաթ հապիս կը լինի, որ աւարտից Նոր-Վաղարշապատի ճեմարանում, իսկ այժմ պատրաստվում է համալսարան մանել բժշկութիւն սովորելու։ Առաջութիւնը թոյլ է, ես կը ցանկանայի, որ մի քանի ամիս անդրկանցներ գիւղում, բայց նրան ոչինչով չես կարող համոզել։

—«Իսկ քանի որդիք ունիք դուք։

—«Մեր տօմմը միչտ բազմաձին է եղել. մեր նախապապ տանուտէր խաչոի ընտանիքը բաղկանում էր աւելի քան յիսուն հոգուց, իսկ ես միայն հինգ զաւակներ ունեմ։ Լալան միակ աղջիկ զաւակս է, մնացած չորսը տղամարդիկ են։

—«Ինչով են պարապվում։

—«Մէկը անտառապահ է մի և նոյն անտառների, որ տեսնում էք, մէկը պրոֆեսոր է Կարլոնի համալսարանում, երրորդը գնդապետ է Կարսի զօրարանի մէջ, իսկ չորրորդը դեռ սովորում է Նոր-Բազրանդի գիւղատնտեսական ուսումնարանում։

Վարդանին անծանօթ երեսցաւ քաղաքի անունը և հարցրեց։

—«Այս կողմերում ես չեմ լիչում մի այս անունով քաղաք։

—«Դա հին Բայազետն է, այժմ այս անունն է կրում։ Մեր քաղաքներից, գիւղերից և գաւառներից չատերը փոխել են իրանց անունները. մի քանիսը իրանց վաղեմի պատմական անուններն են կրում, իսկ մի քանիսը նոր անուններ են ընտրել։

Ցանկարը կրկին ձեռքն առեց լրագրի թերթը և կարդում էր մի յոգնած, որը, որպէս երևում էր, սատակի անհանգստացնում էր նրան։ Վարդանը հետաքրքրութիւնից չարժված հարցրեց.

—«Ինչ նորութիւն կայ։

—«Ամանդին ոչինչ... Լգուց քաղաքում պիտի գումարվի երեսփոխանական ընդհանուր ժողով... մի քանի վիճելի հարցեր պէտք է քննութեան ենթարկվին... չը գիտեմ ինչով կը վերջանայ... կուսակցութիւններ սաստիկ յուզված են երեսում...

—«Դուք ևս կը լինէք այնտեղ։

—„Ցեմ կարող չը լինել։

Խօսակցութիւնից երևաց, որ Վարդանի հիրնկալը, այդ հովիտի գիւղացիներից ընտրված, երեսփոխան էր։

Նախաճաչիկը արդէն վերջացել էր. Վարդանը վերկացաւ, և շնորհակալութիւն յայտնելով, կամենում էր հեռանալ։

—„Եթէ դուք կը ցանկանայք տեսնել մեր գիւղում մի քանի հիմնարկութիւններ, ասաց նորան տանտէրը,—ես սիրով յանձն կառնէի ուղեկցել ձեզ։

—„Շնորհակալ եմ, պարոն, պատասխանեց Վարդանը։

—„Եթէ միւս անգամ էլ պատահի ձեզ անցնել մեր գիւղից, խօսեց տանտիրը,—մեր դռները միչտ բաց կը լինեն ձեր առջև։

—„Շնորհակալ եմ, տիկին, ասաց Վարդանը գլուխ տալով։

—„Ի՞նչ մեր տունը չի ձանձրացնի ձեզ, աւելացրուց տանտիրոջ գեղեցիկ աղջիկը անկեղծ ժպիտով։

—„Շնորհակալ եմ, օրիորդ, ասաց Վարդանը, աւելի խանարհ կերպով գլուխ տալով։

Վարդանը դուրս գալուց յետոյ, այժմ նոր սկսեց զգալ իր նեղված դրութիւնը գիւղական ընտանիքի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԻԿԵՑԻ

—

Մայիսի 26-ին

Ներկայ տարվայ «Մշակի» № 71 «Թանգութիւնը Թիֆլիսում» և № 78 «Քաղաքային ինքնավարութիւն» պատուական և հասարակութեան բարօրութեան համար մտածած և գրած առաջնորդող յօդուածները չատ յարմար ժամանակին լոյս տեսան Ախալցխայի համար, և մենք խորհուրդ ենք տալիս մեր համաքաղաքացիներին ծանր և լուրջ ուշադրութիւն դարձնել այդ առողջամիտ յօդուածների վրա, որոնք միայն ցանցառ և խենթ մարդիկների և նրանց նմանների համար անմիտ են և անխելք. այսպէս, թող ախալցխացիք լաւ կարդան այդ յօդուածները և զգուշանան, եթէ ոչ վերջը չարչար կը պատժվեն և կը զղջան—բայց այն ժամանակ արդէն ուշ կը լինի։ Պարզենք մեր միտքը։ Այս տարվայ յուլիս ամսի սկիզբներին Ախալցխայում լինելու է Նոր ընտրութիւն ձայնաւորների, քաղաքային վարչութեան անդամների և քաղաքագլխի. ընդհանրապէս յայտնի է, որ մեզանում ամբոխը իր ընտրողական քուէն տալիս է ոչ թէ նորան, որ արժանի է ընդունակ է քաղաքային վարչութեան մէջ գործող լինելու, այլ նորան ով հարուստ է և աղա, և մի և նոյն ժամանակ ժողովրդին հարստահարող չարչի, անամօթ, խարդախ, տգրուկի նման ժողովրդի արիւնը ծծող և աղայական բարձրութիւնից արհամարհական հայեացք ձգող ռամիկ վրա։ Այդպիսի աղաներից և իրանց արիստոկրատներ կարծողներից մեր քաղաքը բացի մեծամեծ վնասներից և ամենաչնչին օգուտ չէ կարող սպասել, որովհետև, կրկնում ենք «Մշակի» հետ. „քաղաքային վարչութեան գործողները պէտք է խնայէն բոլորովին անկախ մարդիկ լինեն և իրաւունք չը պէտք է ունենան միմեանց թէ անմիջապէս ուրիշ գործերով զբաղվելու։ Եթէ ոչ զանազան աֆէէրներով և չանուէտ արդիւնագործութեամբ զբաղվելով, նրանք կորցնում են իրանց հեղինակութիւնը զանազան աֆերիստների, չարչիների, մանր հարստահարողների, կաչառք տուողների աչքում։“

Մաքուր ճշմարտութիւն չէ այդ միտքը, սիրելի քաղաքացիք. ասացէք խնդրեմ, ինչ կը լինէր ձեր վիճակը, եթէ մեր այժմեան քաղաքագլուխը չէր լինի պ. Գեղամեանցը և կը լինէր մի հարուստ կալուածատէր, որ ունենար մեծ քանակութեամբ ցորեն. ինչ, դուք կարծում էք թէ այն ժամանակն էլ պուդը 2 ր. 40 կ., ալիւր կարող էինք ձեռք բերել, ինչպէս այժմ, թէ աղա և ցորենատէր ինքնավարութեան ղեկավարների շնորհիւ ալիւրի պուդը բարձրացած կը լինէր 5—6 բուլլի լաւ մտածեցէք, թէ այս թանգութիւնն ժամանակ մեր անգործ աղաները ինչ կեղտոտ և ցած միջոցներով ուզում էին խեղճ ժողովրդի վերջի կոպէկն էլ խլել և իրանց որդնոտած ալիւրը տասնապատիկ գնով սաղցնել հասարակութեան վրա։

Մի ուրիշ կէտ ևս, որ չէ կարելի առանց ուշադրութեան թողնել, տգէտ ժողովուրդը, որ օրէնքից ոչինչ տեղեկութիւն չունի, յաճախ ամեն մէկ գործի համար դիմում է ուրվագային կալուածպարպվին բերանացի խորհուրդներ հարցնելու և կարծիք իմանալու համար. ի մեծ պատիւ մեր այժմեան քաղաքագլուխ պ. Գեղամեանցին, պէտք է ասենք որ պարոնը ոչ թէ ամեն սիրով և յօժարութեամբ լսում է իրան բազմաթիւ դիմողներին թէ ուրվագայում և թէ իր սենեկան ասելը, այլ մինչև անգամ աղքատների համար խնդիրներն ինքն է գրում, ոտքով նրանց հետ միասին գնում է նրանց հողերը տեսնելու, չափելու, որպէս զի ստուգէ թէ իրաւի այդքան է նրանց հողը, թէ դրացի հարուստ աղան այդ խեղճերի հողերից յափշտակել է, և այլ այսպիսի հարիւրաւոր դէպքեր. բայց եթէ ժողովրդական պ. Գեղամեանցի տեղը կը լինէր ամբարտաւան արիստոկրատ աղա, յայտնի է որ այդպիսի դէպքերում ժամերով սպասեցնել կը տար իր խորհուրդին դիմող խեղճերին կամ խնդրատուներին և չատ անգամ էլ չընդունելով նրանց կանպատվեր և կը վռնդէր։ Այդպիսի կոպիտ վարմունքներ մեր աղաների կողմից պատմելիք, փառք Աստուծոյ, չատ են տեսել. ուրեմն թող այդ օրինակելից լաւ խրատվեն և ընտրեն քաղաքային վարչութեան այնպիսի անդամներ, որոնց սրտերին ավելի մօտ են հասարակութեան չարները և որոնք բոլորովին անկախ մարդիկ են, և ոչ թէ կապալառներ և չարչի աղաներ։

Ինչ վերաբերում է Նոր քաղաքագլխի ընտրութեան, մեր համեստ խորհուրդն էր, խնդրել և հանձնել պ. Գեղամեանցին դարձեալ մնալու իր պաշտօնի մէջ, քանի որ նորան արժանի յայտնող չէ մէկին չտենք. և թէկ պարոնը վաղուց ներկայացրել է իր հրաժարականի խնդիրը այնտեղ, ուր հարկն է, բայց յոյս ունենք, որ կը զիջանի ժողովրդի խնդիրքին, և տեսնելով հասարակութեան կողմ համակրութիւնը դէպի ինքը, խրախուսված, դարձեալ իր վրա կառնէ քաղաքագլխի ծանր պաշտօնը, որ այնքան վայել է իրան։

Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մի երիտասարդ, որ ուսում է առել Կ. Պոլսի ամենաչնչին դպրոցներում, խնդրում է մեզ յայտնել, որ կը կամենար մասնաւոր տներում դասեր տալ հայերէն, ֆրանսերէն, իտալերէն և թիւրքերէն լեզուներից և նոյնպէս մաթեմատիկայից։ Ցանկացողները կարող են դիմել Կրկիա (Աչքի դիմաց) № 2 տան մէջ։

—

Շնորհակալութեամբ ստացանք «Հիմնական դիդակտիկական կանոններ» վերնագրով Ա. Դիմաէրքի գործի հայերէն թարգմանութիւնը, թարգմանիչը Հ. Ղուկասեանցն է։ Գիրքը տպված է Ակէքսանդրապոլում, Գ. Լեանոյեանցի տպարանում ներկայ 1880 թուին և արժէ 40 կոպէկ։ Գրքի մասին կը խօսենք։ Շնորհաւորում ենք Ակէքսանդրապոլը, որ ունի այսպիսի գեղեցիկ տպարան։

—

«Մշակին» կէս տարով գրվել ցանկացողները, կարող են գրվել ներկայ ամսից։ Կէս տարվայ բաժանորդագինը 6 բուլլի է։

—

Ֆրանսիական «Temps» լրագիրը հաստատում է այն լուրը, որ մեր ծանօթ Շարլ դը-Կուտուլի Նը-ղանպկիլ է ֆրանսիական հիւպատոս Թիֆլիսում։

—

Նիժնի ստացանք 15 բուլլի յօդուած վանի սովալների հետաքրքիր անձնագրերից։ Ուստի Ռէյնկ 1 ր., Մարտիրոս Հայրապետեան 1 ր., Մնացականեան Յովսէփեան 1 ր., Դաւիթ Դամիրչեանց 1 ր., Գաբրիէլ Կիրակոսեանց 50 կ., Խաչի Պետրոսեան 50 կ., Սարգիս Յարութիւնեան 50 կ., Գալուստ Մեչպանց 50 կ., Օհանեան 50 կ., Աւետիսեան 50 կ., Բաբասեանեան 50 կ., Մաղիկեան 50 կ., Գաթիեան 50 կ., Մարբեան 50 կ., Յովսէփեան 50 կ., Կարապետեան 50 կ., Զէյդանեան 50 կ., Վարդանեան 50 կ., Քանիեան 50 կ., Վաղիրեան 50 կ., Երեմեան 50 կ., Խալաթեան 50 կ., Վլասեան 25 կ., Թարիանեան 25 կ., Փիրալեան 25կ., Մաղիկեան 25 կ., Քանեան 25 կ., Քանեան25 կ., Խաղփայեան 25 կ., Մարկոսեան 25 կ., Լենդանեան 15 ր.։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Զուզուրէթ թաղում Տէր-Մկրտչեանցի և Վարդենի տների առջև անձրևների հեղեղից պատճառվել է մի սարգին պատառուածք, որ տանում է դէպի Նոյն փողոցի տակ անմաքրութեան խողովակը։ Ը նպատելով, որ ահա մի քանի չաթաթ է, որ այդ պատառուածքը յայտնվել է, բայց ոստիկանութիւնը նրա վրա ուշադրութիւն չէ դարձնում. վերջին անձրևի ժամանակ այնտեղից վազող հեղեղը տարաւ իր հետ մի ռուս արհեստաւորի և գցելով Նոյն պատառուածքի մէջ՝ խեղդեց։

—

ՄԵՏՂԱՐԱԳԻՒՈՒՅՑ մեզ հաղորդում են, որ տեղային մի ակ արժանաւոր քահանան վախճանված լինելով, այժմ հանդուցեալի փոխարէն մի ուրիշը ձեռնադրել տալու համար հասարակութիւնը երկու կուսակցութեան է բաժանվել, որոնց մէջ մեծ երկպառակութիւն է ծագել։ Կուսակցութիւններից մէկը ցանկանում է ձեռնադրել տալ տեղային դպրոցի վարժապետներից մէկին, որ աւարտել է Ներսիսեան դպրոցում և աւելի յարմարութիւն ունի կոչված պաշտօնին, իսկ միւս կուսակցութիւնը կամենում է ձեռնադրել տալ մի գիմնազիստի, որ հարիւ իր անունը գրել գիտէ և

մէջ։ Նա գտնում էր իրան որպէս մի բոլորովին վայրենի, որը աւելի քաղաքակրթված հասարակութեան մէջ տանջվում է, թէ ինչու ինքը անտաշ և անկիրթ մնաց, թէ ինչու ինքը չէր կարող այնպէս խօսել, այնպէս դատել և այնպէս պահել իրան, որպէս միւսները։ Այդ ինչ հրաչք էր։ Ցանուտէր թաչի տոնը, անցնելով դարերի բովի միջից, զուլել, մաքրվել և կերպարանափոխվել էր, ստանալով մի նոր և ազնիւ սերունդ։

Վարդանը և իր հիւրկալը միասին գնում էին գիւղի փողոցով։ Նրանց մօտից անցնում էին մաքուր և պարզ կերպով հագնված չինական հիներները, իւրաքանչիւրը ձեռքին հիւսելով մի բան, և նրանց տղամարդիկը գործաւորի հագուստով։ Ոչ մէկը անգործ չէր, ամեն մարդ իր զբաղմունքն ունէր։ Զարմանում էր Վարդանը տեսնելով, թէ որքան փոխվել էր կեանքը, թէ որքան վայելուչ կերպարանք էր ստացել Նաւ Աւագվայ գեղեցկական կոչառութիւնները այլ նս չէին երևում. ամեն տեղ շնչում էր կրթութեան ոգին իր ներսի, կենսագործող զօրութեամբ։ Մի բան որ մնացել էր անփոփոխ, դա էր հայկական խստը—լեզուն։ Բայց որքան մշակվել, որքան կոկվել էր այդ լեզուն, և որքան գեղեցիկ դարձուածներով այժմ հնչում էր նա հայ մարդու բերանում։

Վարդանը իր հիւրկալի հետ այժմ գանվում էին գիւղից դրսում։ Դէպի ամեն կողմ, ուր և նայում էր Վարդանը, երևում էին հարուստ ագարակներ, գեղեցիկ այգիներ, լաւ մշակված դաշտեր և ճոխ արօտամարգեր։

Նրանք անցան մի գործարանի մօտից, որտեղ տախտակներ էին սղոցում։ Այստեղ գործում էին գլխաւորապէս մեքենաներ և չոգին։ Սղոցարանը մասամբարարում էր բոլոր գիւղերի և մերձակայ

քաղաքի համար տախտակներ զանազան ձևերով և զանազան մեծութեամբ։

—«Այդ ումն է պատկանում, հարցրեց Վարդանը։

—«Մեր գիւղում, ինչ գործարան որ տեսնելու լինէք, առանձին մարդու սեպհականութիւն չէ, պատասխանեց նրա հիւրկալը,—գործարանները այստեղ պատկանում են գիւղական համայնքին, ամեն մի գիւղացի մասն ունի նրանց մէջ։ Գերանները ստացվում են մերձակայ անառաջներից, որոնք նոյնպէս գիւղացիների սեպհականութիւն են։

Նրանք անցան սղոցարանից։

—«Ես այդ ահագին չինուածքը, ցոյց տուեց Վարդանի հիւրկալը,—դա պանդագործութեան գործարան է. այստեղ պատրաստվում է մեր գաւառի ամենաշնորհի պանիրը. դա նոյնպէս պատկանում է գիւղական համայնքին։ Իւրաքանչիւր գիւղացի ներկայացնում է այստեղ իր անասունների ստացած կաթը, և ընդհանուր արդիւնքի բաժանման ժամանակ, նրա համեմատ ստանում է կամ պանիր կամ արծաթ։

Նրանք գտնվում էին այժմ դաշտում. Հասունացած հունձքը արտերից քաղվում էր, բայց քաղվում էր ոչ թէ գիւղացու մանգաղով կամ գերանդիով,—այստեղ նոյնպէս գործում էր մեքենան, որ մենակ հարիւրաւոր մշակների գործ էր կատարում։ Ահա ինչ էր նշանակում հեշտացնել ապրանութիւնը.—այժմ հասկանում էր Վարդանը։

Նրանք անցան մի ահագին չինուածքի մօտից, դա ալորիք էր։ Այստեղ նոյնպէս հեշտացրած էր աշխատանքը և ջրի փոխարէն գործում էր չոգին։ Բազմաթիւ գիւղերի ցորենը այս հիմնարկութեան մէջ աղացվում էր, և մաքուր, ճերմակ պէս սպիտակ ալիւրը վաճառանանվում էր դէպի օտար երկրները։ Դա նոյնպէս պատկանում էր գիւղական համայնքին։

Բայց մի բան, որ աւելի զարմացնում էր Վարդանին, այդ այն էր, որ բոլոր գիւղացի բանուորները, որտեղ և հանդիպում էին նրան, աչքի էին ընկնում իրանց համարձակութեամբ, անձնավստահութեամբ և պրական անվեհերութեամբ։ Կարծես, դրանք անվեղ և մեծացել էին կատարեալ ազատութեան մէջ, կարծես, դրանք երբէք թուրքի ապտակը չէին կերել, կամ քրդի նիզակը միանգամ գոնէ չէր վախեցրել նրանց։ Դա տեսնում էր, որ այդ ազիատաց բազմութիւնը ընդունակ էր Տարկը պահանջած ժամանակ, թողնել բանը և արօրը, և նրանց փոխարէն զէնք կրել, և նոյնպէս սմուտ, և նոյնպէս յաջողակ կերպով գործ ածել։

—«Պատերազմի ժամանակ այդ մարդիկը զինուոր են դառնում, ասաց Վարդանի հիւրկալը,—ախատանքը մեծ մասամբ դադարում է, և այս պատճառով պատերազմը միշտ կորստաբեր հետևանքներ է ունենում մեր երկրի համար, թէև նա ունենում է և իր առանձին օգուտները...

Անցնելով դաշտերից, նրանք դարձեալ մօտեցան գիւղին։ Նրանց առջև դրած էր մի Նոր հիմնարկութիւն։ Դա աւելի նման էր այն չէնքերին, որ կառուցված են լինում օրինակելի ագարակների մէջ։

—«Այդ մեր գիւղատնտեսական դպրոցն է, ասաց Վարդանի հիւրկալը։—Այն, որ տեսաք ագուռտան, տարբական ուսումնարան էր։

Այս ինչ դպրոց էր, այսպիսի դպրոց Վարդանը երբէք չէր տեսել, թէև ինքն էլ մի ժամանակ վարժապետ էր եղել։ Նա բոլանդակում էր իր մէջ գիւղական անասնութեան վերաբերեալ բոլոր պարագաները։ Դրա ահագին չինուածքն առջև տարածված էր ընդարձակ ագարակ զանազան բաժանմունքներով, որ մշակվում էին աշակերտների և աշակերտուհիների ձեռքով։ Աշխարհի համարեա բոլոր բոյսերի, տունկերի և ծաղիկների անսպիտ կային այնտեղ զանազան օրինակներ։ Այստեղ գիրքը և մեռած տառը աւելի չէին զբաղեցնում ուսանողներին։ Ամեն ինչ սովորում էին նրանք բընութեան հրաչալի գրքի մէջ։ Այստեղ որոշեալ ժամերում ուսանողները պարապվում էին մարմնամարզութեամբ և զէնք գործ ածելու վարժութիւններով։ «Ահա այսպիսի դպրոցը կը պատրաստէ լաւ երկրագործ և լաւ զինուոր, մտածում էր Վարդանը։

Վարդանը չնորհակալութիւն յայտնելով իր հիւրկալին, բաժանվեցաւ նրանից։ Այժմ ուր պէտք էր գնալ, ինքն էլ չը գիտէր։ Նա տեսաւ հանրաց կառքի նման մի բան, որի երկու կողմերի վրա չարված էին մարդիկ։ Ինքն էլ նստեց, երբ իմացաւ, որ տանում է դէպի երկաթուղու կայարանը։

Երկաթուղու կայարանում նա գտաւ մեծ բազմութիւն, որ սպասում էին գնացքին։ Ցանկարծ նրա ականջին դիպաւ մի ծանօթ ձայն։

—«Վարդան...

Վարդանը յետ նայեց, նրա առջև կանգնած էր պ. Սալմանը։ Երկու վաղեմի բարեկամները գրկախառնվեցան։

—«Ինչա այդպէս, բարեկամ, խօսեց պ. Սալմանը չը թողնելով Վարդանի ասը իր ձեռքից,—մենք զարձեալ տեսնվում ենք միմեանց հետ ուղիղ երկու տարիւր տարուց յետոյ...բաւական երկար ժամանակ է....Դու գեռ նոյնն ես մնացել, Վարդան, դու ամենևին չես փոխվել....Բայց այս երկու դարերի ընթացքում մեծ փոփոխութիւններ եղան մեր երկրում....Ցիրում ես, Վարդան, մի անգամ քեզ ասում էի, թէ Հայաստանը մարդ-

մէջ, մի կով և երկրագործական գործիքներ,—այդ բոլորի համար պահանջում էր միայն 600 ռուբլի, բայց ոչ ոք չը համաձայնվեցաւ գնել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐը, ՔՒՐԴԵՐը ԵՒ ԹԻՒՐՔԵՐը

Նորերումս հրատարակվեցաւ Լոնդոնում Զեմս Կրիկի (Creagh) մի գիրք հայերի, քիւրդերի և Թիւրքերի մասին։ Հեղինակը շատ անգամ ճանապարհորդել է Փոքր-Ասիայում, իսկ վերջին պատերազմի ժամանակ մի տարի կացաւ Հայաստանում։ Երկար ժամանակ ապրելով ասիական Թիւրքիայում, նա կարողացաւ լաւ ծանօթանալ Հայաստանի եղած դրութեան յետ։ Կապիտան Կրիկ իր գրածքի մէջ ասում է, որ Անգլիայի գործը Հայաստանում կարելի է կատարելապէս կորած համարել, եթէ կառավարութիւնը չտայ իր անտարբերութիւնից և չընդունի անմիջապէս իր ձեռքը սուլթանի բոլոր երկիրների կառավարելը։

Իր գրքի ճակատին դնելով Վիկտոր Հիւգոյի ասած խօսքը թէ՝ «երբ Փարիզում մարդիկ են սպանում, դա սպանութիւն է անուանվում իսկ երբ արեւելքում կոտորում են յիսուն հազար հոգի,—դա խնդիր է կոչվում», կապիտան Կրիկ ներկայացնում է Թիւրքայ կառավարութեան գործողութիւնները Հայաստանում ամենահրեշաւոր տեսարանի մէջ։ Սուլթանի կառավարութիւնը, ասում է նա, թոյլ և անկարգ, իր մէջ պարունակում է այն բոլոր տարրերը, որոնք յատուկ են նրան վերջնական և անհրաժեշտ անկմանը հասցնելու։ Ծերութիւնը նպատակ չունի հոգալ իր հպատակների մեծամասնութեան բարօրութեան մասին, բայց կառավարական անձինք նայում են իրանց իշխանութեան, որպէս մի միջոցի վրա, իրանց հանգիստի և կրքերին բաւականութիւն տալու համար։ Պօլիցիայի և հասարակական կարգապահութեան մասին ոչինչ հաստատ գաղափարներ չը կան։ Փաշաների միակ պարապմունքը դրա մէջն է կայանում միայն, ուեւլացնում է հեղինակը, որ հարստանան ամենակարճ ժամանակամիջոցում, փողոր ձեռք գցեն, հանելով այդ փողերը ամեն տեսակ ապիրիներից։ Բայց ամենամեծ ձնշումներին դարձեալ քրիստոնեաներն են ենթարկվում, դէպի որոնց Թիւրքերը ամենամեծ ատելութիւն ունեն։ Քրիստոնեաները մահմեդականների շրջանում նոյն դրութեան մէջ են, ինչ դրութեան մէջ էին սարէմները, իլօտները սպարտացիների մօտ. Թիւրքերը նայում են նրանց վրա մեծ արհամարհանքով, որքան էլ հարուստ, կրթված և ընդունակ լինէին քրիստոնեաները։ Նրանք միշտ աշխատում են վիրաւորել քրիստոնեաներին, որովհետև ամենադատ և ամենաչնչին մահմեդականի մէջ օրէնքը ճանաչում է մի էակ, որ անհամեմատ բարձր է դրված, քան ամենարեւելեան հաստատը։ Այդ անունով կոչվում է իւրաքանչիւրը, որ դաւանում է Քրիստոսի կրօնը։ Քրիստոնեայի վկայութիւնը չէ ընդունվում դատարանների մէջ, նրան ստիպում են այնպիսի զգեստներ հագնել, որ նա ինքն պիտի ամաչի երեւալ հասարակութեան առջեւ, նրան արգելված է զէնք կրել, որով նրանից անձնապաշտպանութեան միջոց է խլվում և այդ պատճառով քրիստոնեան զգուշութեամբ է վարվում, զգուշութեամբ է քայլում իր պատրաստակամ և գոռոզ տիրոջ, Թիւրքի ներկայութեամբ։ Իսկ ինչ որ վերաբերվում է այն, առաջին հայեացքից, օտարոտի իրողութեանը, որ Թիւրքերը, չը նայելով իրանց փոքրամասնութեանը կարողացան այդքան երկար ժամանակ հլու հպատակութեան մէջ պահել այլ և այլ ազգութիւններ,—դրան հեղինակը բացատրում է զլխաւորապէս երկու հանգամանքներով. նախ անչափ խիստ զինուորականացմամբ Թիւրքերի մէջ, որ մահով էր պատժում ամեն յանցանք, և երկրորդ փոխադարձ ատելութեամբ Թիւրքերի լծի տակ ընկած ցեղերի միմեանց մէջ։

Թիւրքերի ատելութիւնը դէպի քրիստոնեաները իր արդարացնող պատճառներն ունի նոյն իսկ պատմութեան մէջ։ Այդ ատելութիւնը ծագից շատ ժամանակ սրանից առաջ։ Հեղինակը զեղեցիկ իր գրքի մէջ խաչակիրների պատերազմի պատմութեան նկարագիրը, որպէս զի պարզի խաչակիրներին յատկանիշ անմոռութիւնը, կեղծաւորութիւնը և խարէութիւնը։ Նա ապացուցանում է որ Թիւրքերը այն ժամանակից կատարեալ իրաւունք ունէին ատել քրիստոնեաներին, որոնք թէ օյժով և թէ ինտրիգաներով ջանում էին վնաս հասցնել իրանց։ Երուսալէմը չէր, այլ Կ. Պոլիսն էր խաչակիրների արշաւանքների նպատակը, այդ պարզ է Հռօմի քահանայապետների գործունէութեան եղանակից, որոնք յոյս ունէին, որ Եւրոպայի թագաւորները կը վերադարձնեն նրանց իրանց կորցրած իշխանութիւնը Թիւրքերից նուաճված երկիրներում։ Խաչակիրների առաջնորդները, որոնք գալիս էին արեւելք իրր թէ սուրբ տեղերը Թիւրքայ լծից ազատելու համար, նշանաւոր էին դարձում իրանց յաղթութիւնները տարբեր խստութիւններով և ապարդիւն արիւնհեղութեամբ։

Գրքի մեծ մասը նուիրված է Հայաստան նին։ Աւելի կամ պակաս ժամանակ Փոքր-Ասիայում եղած միսիոնարների, կօնսուլների զեկուցումները և ճանապարհորդների շատերից տուած տեղեկութիւնները վկայում են, որ հայերի դրութիւնը անպայման կերպով անտանելի է, որ բնակիչների դրութեան առաջադիմութիւնը, բարօրութիւնը և անձնական ապահովութիւնը անհնարին են, քանի որ վերջ չը դրվի անսանձ և արիւնարբու քիւրդերի աւազակութիւններին, բռնութիւններին և կամայականութեանը։ Հայաստանում ոչ կեանքը, ոչ էլ կայքը ապահովված չեն։ Ամբողջ երկիրները մնում են անմշակ և բռնաւորութիւնը, որ ձնշում է բոլոր նակիչների վրա, այնքան մեծ է, որ նրանք պատրաստ են հպատակվել ամեն տեսակ կառավարութեան, որից կարող են սպասել ապահովութիւն և խաղաղութիւն։

Հեղինակը կարճատօս կերպով պատմում է հայոց ազգի պատմութիւնը, որ պատմագիրների ասածին նայելով, համարվում է ամենահին ցեղ երկրագնդս վրա, յետոյ նկարագրում է իր ճանապարհորդութիւնը և ծանօթացնում է մեզ հայերի բնաւորութեան հետ, նրանց ներկայ կեանքի և ապագայի մասին յոյսերի հետ։ Հեղինակը առանձնապէս շեշտում է այն իրողութեան վրա. որ ներկայ հանգամանքներում, հայերը սաստիկ կը ցանկանային միացրած լինել Ռուսաստանին, «չը նայելով, ասում է նա, որ հայերը մեծ համակրութիւն չեն զգում դէպի ռուս պաշտօնեաների դասակարգը, որ, նրանց կարծիքով, ջանում է ջնջել իրանց ազգային ինքնայատկութեան առանձնութիւնները։» Թիւրքայ հայերը, ինչպէս վկայում է անգլիացի հեղինակը, կը կամենային վայելել Թիւրքայից սոսնալու ազատութիւնը Ռուսաստանի հովանաւորութեան տակ։ Կրիկ հաղորդում է, որ բազմաթիւ հայերի հետ խօսակցելուց յետոյ, նա համոզվեց, որ հայերը կը կամենային նոյն իրաւունքները վայելել, որոնց վայելում են նրանց ցեղակիցները Ռուսաստանում։ Զարմանալի չէ, ուեւլացնում է հեղինակը, որ հայերը նախապատվում են մի տերութիւն, որ նրանց շնորհում է իր միւս հպատակների հետ հաւասար իրաւունքներ, մի տերութեան, որ արհամարհանքով է վերաբերվում դէպի նրանց և պահում է նրանց ստրկութեան մէջ։

Հայերի այդ ցանկութեանը, անցնել Ռուսաստանի պաշտպանութեան տակ, պէտք է, կապիտան Կրիկի կարծիքով, Անգլիան ընդդիմադրէ։ Ռուսաստանի դիտաւորութիւնները, ասում է հեղինակը, պարզ են և վառզուց յայտնի՝ «նա կամենում է, պատճառաբանելով քրիստոնեաների ազատութիւնը, նուաճել ամբողջ Թիւրքիան։» Ներկայ բարկում ռուսներին չաջողվեցաւ իրանց ձեռքը զցել Կ. Պոլիս, որ «հաւանական է» թէ կընկնի աւստրիացիների ձեռքը և նա որոնում է ուրիշ տեղ, այն է Փոքր-Ասիայում իր դիտաւորութիւնների համար բաւականութիւն։ Անգլիան կարող է ընդդիմադրել Ռուսաստանին շատ հեշտ կերպով, այն է եռանդով ձնշում ներգործելով Բ. Դրան վրա և ստիպել նրան տալ հաւասար իրաւունքներ որպէս իր հայ, նոյնպէս և մահմեդական հպատակներին։ Հեղինակը առաջարկում է ընդդիմադրել Ռուսաստանին, եթէ լինի պատերազմ, Թիւրք զինուորի միջոցով, որին նա ուսուցանեալ է և որին ընդունակ է գտնում։

Կրիկ իր գրքի մէջ շատ քիչ տեղ է ընծայում իր անձնական տպաւորութիւններին, բայց գրածքի մեծ մասը նուիրում է քաղաքական հարցերին։ Նրա նկարագրութիւնների մէջ նշանաւոր է քիւրդերի բարք ու վարքերի նկարագրութիւնը, որոնց շրջանում նա բաւական երկար ժամանակ է անցրել և նոյնպէս իր տպաւորությունների նկարագիրը քանդված Բայազէտ քաղաքի։ Այդ վերջին նկարագիրը ամենից լաւ է ներկայացնում հայոց ազգաբնակութեան անմիջապէս դրութեան պատկերը Թիւրքայ տիրապետութեան տակ։

կութեան տղայական հասակի օրորոցն է եղել, նրա անմեղութեան ժամանակների զրախտն է եղել,—բայց մի օր կը դառնայ նրա այրական հասակի, նրա զարգացման ժամանակների դրախտը։ Այժմ բոլորը կատարվեցաւ։ Այժմ հայ մարդու ապրուստը խիստ ապահով, ուրախ և խաղաղ է հայրենի հողի վրա։ Բայց եթէ գիտենայիր, թէ որքան աշխատեցինք մենք, մինչեւ նրան այս վիճակին կարողացանք հասցնել...յա աշխատեցինք... այս երկու հարիւր տարվայ ընթացքում հազարաւոր փորձանքների միջից անցանք... բազմաթիւ արեան և աւատ քրտինքի գնով գնեցինք մեր հանգստութիւնը...

—Հիմայ ուր ես գնում, հարցրեց Վարդանը։

—Փառաքը, այնտեղ երեսփոխանական ժողով պիտի գումարվի. ես պատգամաւոր եմ մեր գաւառի կողմից։—Գնանք միասին, Վարդան, ես պիտի խօսեմ, մեր վիճաբանութիւնները գուցէ կը հետաքրքրեն քեզ։

Հնչեց գնացքի վերջին չվիլոցը։ Նրանք մտան վագոնի մէջ։ Գիշեր էր։ Առաւօտեան լոյսը չը բացված, նրանք հասան քաղաքը։ Դեռ քնած էր գեղեցիկ, ազմկալի քաղաքը։ Փողոցներում երեւում էին միայն բանուորներ, որոնք չտապում էին զանազան ֆաբրիկաներում աշխատելու։

—Ենդեան Աղանու՞ պանդոկը, հրամայեց պ. Սալմանը կառապանին։

Կառքը սլանում էր ուղիղ և հարթ փողոցների միջով. երկու կողմից բարձրանում էին հոյակապ շինութիւններ զանազան գոյներով։ Վարդանը կարծում էր, թէ պալատների միջով է անցկնում։ Պ. Սալմանը ցոյց էր տալիս նրան Նշանաւոր տները.—Ահա այդ համալսարանն է»—«ահա այդ գիտութիւնների ակադեմիան է»—«դա հին թաղաքական պալատն է, որ այժմ ծառայում է որպէս մուզեումն—դա քաղաքի Նշանաւոր թատրոններից մէկն է»—«դա մի հիւանդանոց է»—«դրանք այն հերոսների արձաններն են, որ Նշանաւոր եղան վերջին յեղափոխութեան ժամանակ»—«դա մի լրագրի խմբագրատուն է, ուր օրեկան 150,000 օրինակ է տպվում»—«դա...

—«Զինուորանոց չը կայ, նրա խօսքը կարեց Վարդանը։

—«Չը կայ, այստեղ ամեն քաղաքացի զինուոր է,

—«Գեղեցիկ քաղաք...հրաչալի քաղաք...բաց ցանկանչեց Վարդանը խորին յափշտակութեան մէջ։

Կառքը կանգնեց «Ենդեան Աղանու» հիւրանոցի առջեւը։ Պ. Սալմանը Վարդանի հետ մտան մի առանձին փոքրիկ սենեակ, որ կից էր հասարակաց դահլիճին։ Այնտեղ Թոմաս էֆէնդին Մէլիք-Մանսուրի հետ սաստիկ վիճում էին։

—«Դա կատարեալ էշի մարիրոսութիւն կը լինի, ասում էր Թոմաս էֆէնդին։

—«Իմ կարծիքով, դա ամենաուղիղ ճանապարհն է, որ կը հասցնէ ցանկացած նպատակին, պատասխանում էր Մէլիք-Մանսուրը տաքացած կերպով։

—«Այդ ճանապարհը մեզ չատ հեռու կը տանէ և ցանկացած նպատակին կը հասնենք գուցէ էշի զատկին, ասում էր Թոմաս էֆէնդին ծիծաղելով։

—«Լսեցէք Սալմանը, լսենք նրա կարծիքը, ասացին նրանք, դաղարեցնելով վիճաբանութիւնը։

Մեծ եղաւ Նրանց զարմացքը, երբ տեսան Վարդանին, որը, կարծես, գետնից դուրս և կաւ։

—«Դու ո՞րտեղից լոյս ընկար, հարցրեց Թոմաս էֆէնդին իր յատուկ հեգնական ժպիտով։

—«Մի և նոյն երեսդը զարմացնում է և ինձ, պատասխանեց Վարդանը նրա ձեռքը սեղմելով.—ես քո խորտակված դիակը գտայ Ալաչկերտի լեռների ստորոտում և յետոյ Թաղեցի քրդերի գերեզմանատան մէջ, իսկ այժմ...

—«Այժմ ես կրկին յարութիւն առայ, պատասխանեց նա ծիծաղելով.—Մինչ դու չես հաւատում հոգեփոխութեան վարդապետութեանը։ Իմ թշուառ հոգին անցաւ ամենատխմարար կենդանիների մարմնի մէջից.—մի քանի տասնեակ տարիներ գայլի մարմնի մէջ էի, յափշտակում էի, ապրում էի որսերով... մի քանի տասնեակ տարիներ էշն մարմնի մէջ հայում էի, քծնվում էի և պտոյտ էի գալիս այն մարդկիների շուրջը, որոնք ինձ հոգ էին տալիս...մի քանի տասնեակ տարիներ օձի մարմնի մէջ ոլորվում էի, սողում էի գետնի վրա և պատված ժամանակ խայթում էի...մի քանի տասնեակ տարիներ էշի մարմնի մէջ զոռում էի, ականչներիցս այնքան քաշեցին, որ գլխումս խելք չը մնաց...վերջապէս իմ թշուառ հոգին մտաւ առիւծի մարմնի մէջ, այստեղ բաւական մարդվեցաւ և սրբվեցաւ նա։—Այդ շրջանը կատարեց նա երկու հարիւր տարվայ ընթացքում։ Եգիպտոսի մումիաները հազարաւոր տարիներ մնում են պիրամիդների տակ, անսամբերութեամբ սպասելով հոգիների վերադարձին, բայց իմ հոգին աւելի չուտ կատարեց իր շրջանը։

—«Լեւ ես բախտ ունեցայ կրկին տեսնել կերպարանափոխված Թոմաս էֆէնդուն, կարեց Վարդանը նրա խօսքը։

—«Այո՛ Ձեր տեսած առաջվայ Թոմաս էֆէնդին իր զարու հարազատ զաւակն էր, բայց ժամանակները փոխեցին նրան։ Այժմ նա ներկայ սերնդի լաւ ներկայացուցիչներից մէկն է։ Բայց ներկայ սերունդը մեծ յառաջադիմութիւն է գործել, սիրելի Վարդան։ Ցիշում ես, Մէլիք-Մանսուրը մի ժամանակ «լաւ ասեղներ» էր կանչում և թափառում էր Ալաչկերտի գիւղերում, բայց նա այժմ մի առանձին զօրաբաժնի գլխաւոր է։

Վարդանը զարձաւ դէպի Մէլիք-Մանսուրը և պատկառանքով սեղմեց նրա աջը։

—«Մենք ուշանում ենք, պարոններ, նիստը չուտով կը սկսվի, շտապեցնում էր պ. Սալմանը։

—«Դա մեր կուսակցութեան՝ ազատամիտների պարագլուխն է, ասաց Թոմաս էֆէնդին չընչելով Վարդանի ականջին, և ցոյց տալով պ. Սալմանի վրա։—Մի երեսի հառ է պատրաստել այսօրվայ ժողովի համար։ Ախ, որքան լաւ խօսում է նա...

—«Ինձ էլ տարէք, պարոններ, ես էլ ցանկանում եմ լսել...գոչեց Վարդանը ուրախութեամբ։

—«Գնանք...վեր եղաւ նրա մօտ մի օտար ձայն։

Վարդանը այլ բան արաւ, զգաց, որ իր տեսածը բոլորը երազ էր։ Նրա չուրջը գեռ պատում էր գիշերային խաւարը, և նա գտնվում էր անքակտ Լալայի հողդամբարանի մօտ։ Բայց այն ինչ օտարտոր ձայն էր, որ զարթեցրուց նրան, այն ով էր, որ ասաց «գնանք։»

Ցանկարծ չորս զրնգ ձեռքեր յափշտակեցին նրան և ամեն ինչ թաղվեցաւ գիշերային մթութեան մէջ...

ԻԱՖԵԻ